# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թերզյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ Ու Մ

«27» մայիսի 2019 թվականի N 20

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 111-Ն որոշումը, ի լրումն Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 6-ի N38 որոշման՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում Մուսալեռ համայնքին տրամադրվող աղացած ասֆալտի փոխադրման, դրանով համայնքի փողոցներում փռսալցման, հարթեցման աշխատանքների կատարման համար լրացուցիչ տրամադրել 24 000 /քսանչորս հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, մայիսի 27
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ maillo:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2019 թվականի N 19

## ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու կողմից 2005 թվականի փետրվարի 22-ին հաստատված կանոնակարգը և հաշվի առնելով Մուսալեռ համայնքում 27.05.2019թ. կայացած գյուղատնտեսական նշանակության հողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում կայացած 2.4053 հա 04-069-0152-0014 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության (հողատեսքը՝ արոտավայր) հողատեսքի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:
2. Աճուրդում հաղթող ճանաչել «ՎԻՊԵԿՈ ԱՄ» ՍՊԸ-ին (գլխավոր տնօրեն՝ Արա Հակոբյան) և նրա հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, մայիսի 27
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաոլ Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2019 թվականի N 18

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 111-Ն որոշումը, 2019 թվականի հունվարի 30-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, մայիսի 20
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի
N 18 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

| Հ/Հ | Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը | Մահվան ամսաթիվ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Կոստանյան Պապիկ Համբարձումի | 08.05.2019 | Կոստանյան Վաչագան Պապիկի | 50 000 |
| 2 | Ավետիսյան Գեղեցիկ Աղաբեկի | 17.05.2019 | Ավետիսյան Վարդան Ավետիսի | 50 000 |
| 3 | Պողոսյան Սվետլանա Թեմուրի | 18.05.2019 | Պողոսյան Հակոբ Ռոբերտի | 50 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» մայիսի 2019 թվականի N 17

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով ՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-2/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար նշանակել և անցկացնել մրցույթ՝ 2019 թվականի հունիսի 14-ին:
2. Աշխատակազմի քարտուղարին /Գոհար Սայադյան/ սահմանված կարգով նախապատրաստել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հայտարարության տեքստը:
3. Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի աշխատանքների կազմակերպման համար լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　　　　　Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, մայիսի 10
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» մայիսի 2019 թվականի N 16

### ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 111-Ն որոշումը, 2019 թվականի հունվարի 30-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, մայիսի 6
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի
N 16 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

| Հ/Հ | Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը | Մահվան ամսաթիվ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Տեր-Գևորգյան Ռաֆայել Մաթևոսի | 16.03.2019թ. | Տեր-Գևորգյան Գրիշա Ռաֆայելի | 50 000 |
| 2 | Բաղդասարյան Փամբուխ Ղևոնդի | 21.03.2019թ. | Բաղդասարյան Լադիկ Մկրտչի | 50 000 |
| 3 | Սարգսյան Մակեդոն Երեմի | 29.03.2019թ. | Սարգսյան Վարդան Մակեդոնի | 50 000 |
| 4 | Զեյնալյան Գոհար Պետրոսի | 28.03.2019թ. | Գասպարյան Արշակ Գասպարի | 50 000 |
| 5 | Քոչարյան Սոֆիկ Նիկոլայի | 04.04.2019թ. | Քոչարյան Գեղեցիկ Խորենի | 50 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՍԱԼԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի
N 16 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Ծնված երեխաների ծնողներին դրամական օգնություն տալու

| Հ/Հ | Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը | Երեխայի ծննդյան օրը | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Քոչարյան Նարե Նարեկի | 28.02.2019թ. | Քոչարյան Նարեկ Ավետիսի | 30 000 |
| 2 | Ներսիսյան Անգելինա Վալերիկի | 16.04.2019թ. | Ներսիսյան Վալերիկ Վաչագանի | 30 000 |
| 3 | Սահակյան Ալեն Աշոտի | 04.04.2019թ. | Սահակյան Աշոտ Սևակի | 30 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Ճառլ Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» մայիսի 2019 թվականի N 15

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով, ՀՀ կառավարության 02/02/2002թ. թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 23/04/2019թ. N 01/7/02462-2019 գրությամբ հաստատած համաձայնությունը հողամասի և դրա վրա առկա շինության նշանակության փոփոխության վերաբերյալ՝ որոշում եմ.

1. Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Կոմիտաս փողոցի 17/1 հասցեում գտնվող քաղաքացի Հակոբ Մարգարի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-007-027 ծածկագրով բնակավայրերի կենցաղի տան կառուցման համար 0.0119 հա հողամասի գործառնական նշանակությունը գործող օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան փոփոխել բնակելի կառուցապատման հողամասի, իսկ կառուցապատված հողամասում գտնվող հասարակական նշանակության կենցաղի տան նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի տան: Շինության գործառնական նշանակությունը համարել փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ շինարարական աշխատանքներ կատարված չեն:
2. Նշված հողամասին՝ շինությունով, տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Կոմիտաս փողոց, թիվ 17/1:

3. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից:
4. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, մայիսի 3
գ. Մուսալեռ